ՀՀ Լոռու մարզի Օձունի համայնքապետարանում կայանալիք աճուրդ վաճառքի մասին

12.01.2022

Տիպ՝ Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հայտատու՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձունի համայնքապետարանի աշխատակազմ

ՀՀ Լոռու մարզի Օձունի համայնքապետարանը 2022 թվականի, փետրվարի 18-ին, հայտարարում է բաց դասական աճուրդ վաճառք համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի, հետևյալ լոտով՝
Լոտ 1. ՀայաստանիՀանրապետության Լոռոս մարզի Օձուն համայնքի (այսուհետ՝ համայնք) սեփականությունը հանդիսացող, համայնքի կազմի մեջ մտնող Հագվի գյուղի կադաստրային քարտեզի 06-058-0013-0021 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման, 0.05062հեկտար մակերեսով հողամասը և հողամասում առկա 89.3 քառակուսի մետր շինությունը հասարակական նշանակությամբ օգտագործելու նպատակով, օտարել աճուրդով:
Աճուրդի մեկնարկային գին սահմանել 664000 (վեց հարյուր վաթսունչորս հազար) ՀՀ դրամ, նախավճարի չափը՝ մեկնարկային գնի հիսուն տոկոսը, նվազագույն քայլի չափը մեկնարկային գնի 5%, մասնակցության վճար՝ տաս հազար (10000) ՀՀ դրամ:

Աճուրդը տեղի կունենա 2022 թվականի փետրվարի 18-ին ժամը 11:00-ին, Լոռու մարզի Օձուն համայնքապետարանում (գյուղ Օձուն, փողոց 6 շենք 10 հասցեում): Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է անձը հաստատող փաստաթղթով ներկայանալ Օձունի համայնքապետարան:
Հայտերն ընդունման վերջնաժամկետն է 2022 թվականի փետրվարի 15-ը:
Լոտերի ուսումնասիրության և կանոնակարգին ծանոթանալու համար ներկայանալ Օձունի համայնքապետարան կամ զանգահարել +37477707038 կամ +37477566724 հեռախոսահամարներով:

Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք գյուղ Օձուն փողոց 6 շենք 10

Հեռ.՝ +37477566724

Էլ. փոստ՝ Odzun@bk.ru